

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ  
ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 300-ԱՄԵԱԿԻ  
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ  
22-24 Նոյեմբեր 2000 - Երեւան

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ  
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԲԲԱՀԱՅՐ  
ՀՈԳԵՅ. ՀԱՅՐ ԵՂԻԱ. Ծ. ՎՐԴ. ՔԻԼԱՂՊԵԱՆԻ  
ԵԼՈՅԹԻ ԽՕՍՔԸ  
ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԳԻՏՈՒԹԻՒՆԵՐՈՒ  
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՄԷՋ

Վեհափառ Տէր, Մեծարդոյ Նախագահ Հայաստանի Հանրապետութեան, Յարդելի Ակադեմականներ, Սիրելի հիւրեր,

Մխիթարեան Միաբանութեան հիմնադրութեան երրորդ դարադարձի յոբելեանը՝ հրաշալիօրէն կը զուգադիպի. Հայոց Քրիստոնէութեան 1700-ամեակին: Խսկապէս ճիշտ 1700-ին Մխիթար Վարդապէտ Սեբաստացին հիմը դրաւ իր Միաբանութեան ի ծառայութիւն կրօնքին եւ Հայրենիքին:

Հաւատքը եւ գիտութեան սէրը Հայ ժողովուրդի բազմադարեան պատմութեան մէջ զուգահեռ ընթացած են եւ իրարու զօրավիգ կանգնած:

Արդէն իսկ չորրորդ դարէն, հայ մշակոյթը ճառագայթեց վանական կեդրոններէն եւ անդրանիկ գլուխ գործոցները ծնունդ առին այս հաւատքէն:

Հայոց վանքերու մէջ հաւատք եւ մշակոյթ իրարմէ անբաժանելի իրականութիւններ են. Մխիթարեան Միաբանութիւնը իր նախնեաց հոգին ժառանգելով՝ հաւատարիմ մնաց այս աւան-

դութեան, ու անհուն նուիրումով լծուեցաւ կենդանացնելու իր մշակութային մեծ հարստութիւնը:

Մխիթար Վարդապետ Մեքաստացի իւրայատուկ առաքելութիւն եւ ճակատագիր մը ունէր - փրկել իր ժողովուրդի ինքնութիւնը խոր հաւատքի եւ գիտութեան ճամբով:

Մխիթար խորապէս գիտակցեցաւ իր ժողովուրդի ծանր իրավիճակին ու ծրագրեց իմաստ մը տալ ամէն հայու առանձնաբար, որպէսզի կարելի ըլլար հասնիլ բոլորին:

Հայու իրականութեան մէջ վտանգուած էր ամէն ինչ. հողը, ազգութիւնը, օրէնքները: Կարելի էր փոխարինել մի միայն հասուն հաւատքով եւ գիտակցութեամբ դէպի իր պատմութիւնը եւ մշակոյթը. միայն այս ճամբով հայը կրնար ճանչնալ ինքզինքը եւ չվախնալ ուրիշներէն եւ պաշտպանել իր ինքնութիւնը: Այս ազգային ինքնագիտակցութեան վերարժեւորումը պէտք է ծառայէ լաւագոյն կերպով ապրելու ներկան, լուսաւոր հայեացքով նայիլ ապագային եւ առանց վախնալու բացուիլ միւս մշակոյթներուն: Մխիթարի լուսած ծրագիրը նախ որդեգրուեցաւ իր Միաբանութեան, ապա ընդունուեցաւ ու գործադրուեցաւ ողջ հայութեան կողմէ:

Այն առաքելութիւնը, որ Միաբանութիւնը 300 տարիներու ընթացքին իրականացուց աշխարհի չորս ծագերուն ցըռուած Հայ ժողովուրդին մէջ, այսօր նոր ուղի մը կը գտնէ իր անկախութիւնը վերագտած Մայր Հայրենիքին մէջ: Վերարծարծելով իր պատմական յիշողութիւնը եւ վերակենդանացնելով իր արմատները, Մխիթարեան Միաբանութիւնը կը նայի Հայրենիքին, որպէս իր ներշնչումի աղբիւրին: Պանդիստութիւնը, որ անցեալին Մխիթար Մեքաստացին ապրեցաւ իր հալածեալ ժողովուրդին հետ միասին, այսօր արդէն վերածուած է հայրենի ժողովուրդին մէջ գործելու կենսակերպի մը:

Զօրակցութիւնը եւ հասկացողութիւնը, որ հայրենի կառավարութիւնը կը շարունակէ ցուցաբերել, կը պատուէ այս Միաբանութիւնը, կը հզօրացնէ իր գործունէութիւնը եւ յոյազ լի կը նայի ապագային:

**Սրտանց չնորհակալութիւն կ'ուզէի յայտնել՝**

Ամենայն Հայոց Հայրապետ, Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Կաթողիկոսին իր հայրական ներկայութեան եւ զօրակցութեան համար,

Հայաստանի Հանրապետութեան նախագահին՝ Մեծարդոյ Տիար Ռոբերտ Քոչարեանին,

**ՀՀ Ազգային Ակադեմիայի նախագահ Տիար Ֆադեյ Սարգսեանին, եւ բոլոր այն պետական եւ գիտական մարմիններուն, որոնք կազմակերպեցին Միաբանութեանս յորելինական տօնակատարութիւնները.**

**Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի մէջ եռօրեայ նստաշրջանով,**

**Ազգային գրադարանին մէջ՝ Մխիթարեան Միաբանութեան հրատարակչական ցուցահանդէսով,**

**Ազգային պատկերասրահի մէջ՝ նկարչական ցուցահանդէսով, եւ հուսկ՝ Ազգային օպերայի մէջ համերգով՝ Մխիթարեան նախկին սան Յովհաննէս Զէքինեանի ղեկավարութեամբ:**

**Մասնայատուկ չնորհակալութիւն կ'ուզէի յայտնել բոլոր այն ուսումնահերներուն, որոնք այս օրերուն իրենց զեկուցումներով անգամ մը եւս փառապանծ պսսկը պիտի հիւսեն Մխիթար Սեբաստացիի, որ գիտցաւ Աւետարանի խօսքը գործադրել եւ մեռնիլ ցորենի հատիկին պէս, որպէսզի բիւրապատիկ պտուղներ պարզեւէ իր սիրեցեալ հայ ժողովուրդին:**

**Այսօր Մխիթարի Միաբանութիւնը իր երկու ճիւղերու միաւորումով կը շարունակէ ընթանալ իր Հիմնադրի՝ Մխիթար Վարդապետ Սեբաստացիի բացած ուղիով, ի նպաստ իր ժողովուրդի հոգեւոր լուսաւորութեան:**

**Մխիթար Վարդապետ Սեբաստացին 1700 թուականին սկսաւ իր առաքելութիւնը հրատարակչական գործունէութեամբ: Միաբանութեանս նորագոյն գործը եւս հրատարակչական է:**

**Ուրախութեամբ կ'ուզեմ նուիրել Մխիթարեան հրատարակչատունէն վերջերս լոյս տեսած՝ Ս. Ղազարի ձեռագիրներու Հայ մանրանկարչութեան երկրորդ հատորը, Հայաստանի Ազգային Ակադեմիային՝ ի դէմս Ակադեմիայի նախագահ Տիար Ֆադեյ Սարգսսեանին:**